

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ԻՆՉՈՒ ՓՆՏՈՒԵՄ

Ես եմ այդ որ կը փնտռեմ տարիներ՝
Յամբաքայլ, յոգնած ու մոլորած՝
Ճնշող բնագրովն իմ անբացատրելի,
Յագեցնելու իմ ներքին աշխարհս:

Իմացիր, որ աշխարհն է այս՝ կատարեալ,
Բնութեամբ բարերար՝ նման Հաստիչին,
Լի օրհնութեամբ՝ պիտանի բոլորին,
Կարենալ ունենալու փնտռածդ էական:

Մի՞թէ անկարելին է որ կը փնտռեմ,
Զի սուրբն ու գիտնական կարծես
Տարիներ կը փնտռեն նոյն՝ ինձ նման,
Մնալով մայրամուտներ ձեռնունայն:

Եւ այդու իսկ ներքին ձայնն իմ հաստատ
Կը վկայէ գոյութիւնը միակ ճշմարիտին,
Մնայուն խաղաղութիւնը քրիստոսական,
Յանձնուած բոլորին սիրով անսակարկ:

Մի՞թէ կոյր եմ դեռ ու անհասկացող,
Որ կրկնակ սխալներով իմ բազում
Կ'անտեսեմ ու չեմ իմանար էականը,
Որ կը խաղաղեցնէ իմ խռովութիւնս:

Այդ խաղաղութիւնը չէ աշխարհէն մեր,
Սակայն հասանելի ու անկորուսելի՝
Անհատական բաժինը մեր Արարիչէն՝
Ստանալի ճշմարիտ հետքովն Քրիստոսի:

Մի՞թէ սուտ է իմ այդ փնտռտուք
Եւ կամ հնարովի նպատակասլացք,
Որ կը հեռանայ հետն իմ քայլփոխի,
Զունենալու, չիմանալու զայն յաւէտ:

Պիտ' չփնտռեմ յետ այսու այն տենչանքով՝
Կուրացնող ցանկութեամբ աշխարհական,
Զի այլ է խաղաղութիւնն աստուածային՝
Զուարթացնող ու կապող շունչը կեանքին:


Մի՞թէ համոզումն է իմ այդ հպարտ,
Որ կը խափանէ տեսնելու նշոյլը լոյսի,
Ճշմարիտ ճանապարհը իմաստութեան՝
Նպատակը կեանքին այս ստեղծական:

Զէ պէտք քրտնաթոր յոգնութիւն օրական,
Հասնելու խաղաղութեան նաւահանգիստ,
Այլ ընթանալ է պէտք հետքով Քրիստոսի՝
Բաշխողը մեր կեանքին ու խաղաղութեան:

Ով կը փնտռէ ինձ նման անյենարան,
Կը մնայ շուարած ու յանձնուած հովին,
Կը տարուբերի նման հովի ալիքներուն,
Առանց ունենալու բաժինը փնտռածին:

ՍԱՄՈՒԷԼ Ծ. ՎՐԳ.

(Նոյեմբեր, 2018)



ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

79 ՏԱՐԻՔԻՍ ՍԵՄԻՆ

Տարիներ առաջ՝ 15 տարեկանիս,
Մայրս լսեց խօսքը վարդապետին,
Երուսաղէմէն եկած Հայր Զաւէնին,
Տալու զաւակը Յակոբայ վանքին:

Մայրս Թագուհի՝ օրերով մտմտաց,
Ունէր հինգ տղայ զաւակ սնուցած.
Բաժնուի՞լ ու զրկե՞լ իր Պետրոսը,
Որ ըլլար վարդապետ Երուսաղէմի:

Բախտաւոր էի ես մայրով բարի՝
Եկեղեցասէր ու աստուածասէր,
Որ շաբաթ օրով լոգանքի պահուն
Փսփսաց՝ վարդապետ կ'ըլլա՞ն:

Հնազանդ ու օգնական էի ես մօրս,
Իր մօտն էի միշտ, խելօք ու լսող.
Զէի երագեր որ պիտի բաժնուիմ.
Բայց ինչո՞ւ ես եւ ոչ Յովհաննէսը:

Ես պատանի ու անտեղեակ կեանքէ,
Մօրս անակնկալ խօսքէն շփոթած,
Զէի գիտեր ինչպէ՞ս պատասխանել.
Ի՞նչ էին Երուսաղէմ ու վարդապետ:

Թէեւ անուս, բայց փորձով խոհական,
Մայրս կ'ուզէր տալ իր Նուիրողին,
Զոհաբերում՝ նման զոհին Իսահակի,
Միշտ գոհացող գերագոյն Հոգացողէն:

Եկաւ օրը բաժանման ու արցունքի,
Խրատն էր մօրս ըլլալ բարի, ո՛չ չար,
Օրհնեց զիս մնալ միշտ անփորձանք,
Վստահ յանձնեց զիս հօրս ու աղբօրս:

Հեծկլտալով յետ նայեցի մօրս դէմքին,
Կարծես այդ ըլլար վերջին տեսութիւն,
Մի՛ լար փաշաս, ըսաւ հայրս ու գրկեց.
Զէի հաւատար եղած տեսարանին այդ:

Շատեր կային ժառանգաւոր ինձ նման,
Սիրեցի բոլորը ու շրջապատը սիրուն,
Որ իրօք մոռցնել տուաւ տան կարօտ՝
Հօրս ու մօրս, եղբայրներուս կարօտը:

Կոչո՞ւմն էր որ բերաւ զիս Երուսաղէմ.
Զունիմ պատասխան, զի էի անգիտակ:
Մայրս առաջնորդեց զիս համոզումով,
Որ կայծ առաւ Երուսաղէմեան կոչով:

Ես կը հաւատամ նախախնամութեան,
Որ կը գործէ իր գրգիռով ու խայծով,
Ընտրել ըստ մեր ատակութեան, որ է՝
Զեւաւորումը մեր նախընտրութեան:

Մօրս միջոցաւ կանչը երուսաղէմեան
Եղաւ խթանը նախախնամութեան,
Որ ես ըլլամ ջանասէր մշակը Տիրոջ,
Վաստակելու քանքարներ աւելիով:

Եւ այսօր վարդապետ, ես յետադարձ՝
Կը գրեմ տողերս պատանի արցունքով՝
Յիշատակին՝ մօրս հաւատքին ու սիրոյն,
Որ ես մեծցայ խունկի բոյրով եկեղեցիին:

Տարիներ եղայ հեռու Սուրբ Յակոբէն,
Ու ես այսօր 79 տարեկանի մուտքին,
Կեանքի ծառիս ստուերը երկարած,
Կը խուզարկեմ մտմտալով օրերս հին:

Երբեմն հեղգութիւն ու անհոգութիւն,
Եղան պատճառներ մեղաւոր անհուն,
Զախող ու նուազ վարուցանքին իմ,
Թերացում պարտքիս՝ սիրոյ Արքային:

Այս է իմ հոգու տարտ՝ մտմտուք սրտի,
Տարիներ ետք չըլլալ մշակ անպիտան,
Զմնալ դուրս դռնփակ՝ օրն միութեան,
Զի հաւատաւոր որդեգիրն եմ ես Անոր:

Կեանքն է արդիւնաւոր ամէն տարիքի,
Ինչպէս ճրագն աղօտ կամ լուսաւոր,
Քանի դեռ կայ քո մէջ շունչ կենդանի,
Կը ճանչցուիս այն ինչով որ կը բաշխես:

**ՍԱՄՈՒԷԼ Ծ. ՎՐԳ.
(Գեկտեմբեր, 2018)**